

- 89 Այսպէս հանդերձեալ թափօրն ողբալի
Ընթանայր յուշիկ յաւէժ ըստ կարգի
Ի մեծ հրապարակ յաւագ փողոցի,
Եւ յայլ պողոտայս այսրբ քաղաքի:
- 90 Յետոյ յուղարկումն այս կալնոյր դադար
Հանդերձ դագաղօք յայս մեր սուրբ տաճար,
Ուր բազմարան ինչ ջահիւք պատրաստ կայր,
Յորոյ վերայ նաչն հանգուցեալ մընայր:
- 91 Ապայ ձօնէ անդ պատարագ ի ձայն
Ժողովորայեան Ազգիս Արամեան,
Որ յետոյ առնէր ձայնիւ ողբական
Բողոր մեօք հանդերձ պաշտօն հանգրստեան:
- 92 Իսկ ընդ երեկոյս նորին իսկ աւուր
Անդրէն յայս տաճար բազմութիւն խըմբիւր,
Ուր գութ Տեառն ի մէնջ սակս նորա մաղթիւր,
Քահանայաթաղն ամբողջ կատարիւր:
- 93 Վերջու ի զարդու յայնց մերկացուցեալ
Մաքուր պատենօք մարմինն ամփոփեալ
Ի Գիւր հանգստեան խընկեալ եւ օրհնեալ
Հանդչիւր սաղմոսեալ լ' ամփոս կարգացեալ:
- 94 Անդ ընդ իւր պատեալ կապարաւ թաղիւր,
Կըրկնակի լեզուաւ կարծ վէպ վարուց իւր,
Որ աստէն շեշտիւ յինէն շարադրիւր,
Եւ յիտալացի բարբառ թարգմանիւր:
- 95 Զայն թարգմանութիւն ոճիւ յոյժ յարմար
Քաջ Մուրատճայեան Տէր Պետրոսն արար,
Որ էր աստ Սարգսի խոստովանահայր
Յորոյ տանն իսկ մեք միշտ կալաք դադար: